Հարավային Կովկասը հանրապետականների և դեմոկրատների ծրագրերում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 06.11.2024 թ.[1]

30.10.2024-ին Միացյալ Նահանգների հայերի ամենամեծ լոբբիստական կազմակերպությունը՝ Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը (ANCA), հայտարարեց, որ չի աջակցում ԱՄՆ-ի նախագահի թեկնածուներից և ոչ մեկին: Ըստ կազմակերպության մամլո հաղորդագրության՝ ո՛չ հանրապետականները և ո՛չ դեմոկրատները չեն արդարացրել ամերիկահայերի սպասելիքները ազգային հարցի համատեքստում և չեն նպաստել ՀՀ-ի և Արցախի անվտանգությանը: *«Երկու կուսակցություններն էլ պատասխանատու են Ադրբեջանին զինելու, ցեղասպանությանը մասնակից դառնալու և Արցախից հրաժարվելու համար: Նրանցից և ոչ մեկը որևէ կերպ չի հրաժարվել այս անխոհեմ, անպատասխանատու և ցեղասպան քաղաքականությունից»,*– նշված է ANCA-ի հայտարարության մեջ:

Դժվար թե հնարավոր լինի ANCA-ի կարգի լոբբիստական կառույցի դեմարշը պայմանավորել ԱՄՆ-ի անցած տարիների քաղաքականությամբ, երբ նախ՝ Դ. Թրամփի վարչակազմի թողտվությամբ 2020 թ. Ադրբեջանը պատերազմ սկսեց Արցախում, իսկ հետո՝ Ջ. Բայդենի ղեկավարած դեմոկրատները 2023 թվականին անտեսեցին ԼՂՀ-ի բռնի լուծարումը: ANCA-ն տպավորիչ քաղաքական հիմքեր ունեցող կազմակերպություն է, և կարելի է ենթադրել, որ խոսքը ոչ թե Վաշինգտոնի իստեբլիշմենտի դեմ «վրդովմունքի» մասին է այն ամենի համար, ինչ այն արել է ոչ վաղ անցյալում, այլ՝ կառույցի մտավախության, որ անկախ այն բանից, թե ինչպիսին կլինի ներկայիս ընտրությունների արդյունքը, Միացյալ Նահանգները տարածաշրջանում կշարունակի ՀՀ ինքնիշխանությանը և անվտանգությանը սպառնացող քաղաքականություն: ANCA-ին հասած տեղեկատվության օբյեկտիվությունը Հարավային Կովկասում թե՛ հանրապետականների, թե՛ դեմոկրատների ապագա ծրագրերի վերաբերյալ կասկածից դուրս է՝ հաշվի առնելով կազմակերպության լայն կապերն ու վաշինգտոնյան շրջանակներից հստակ և գաղտնի տեղեկատվության հասանելիությունը: Իրականում այդ ծրագրերն արդեն քննարկվում են միջազգային փորձագիտական հանրությունում, ինչը վկայում է դրանց գաղտնիության մասնակի կորստի մասին: Խոսքը Վաշինգտոնի՝ Հարավային Կովկասը (ՀԿ) իր գլոբալ ռազմավարության մեջ օգտագործելու ցանկության մասին է՝ բազմաբևեռ աշխարհի ձևավորումը կանխելու համար: Հիմնական հարցն այն է, որ ԱՄՆ-ում իշխանության համար պայքարող քաղաքական ուժերը տարբեր տեսակետներ ունեն այս ռազմավարության առաջնահերթ քայլերի և, համապատասխանաբար, ՀԿ տարածաշրջանն իրենց գլոբալ խաղի մեջ ներգրավելու ուղիների վերաբերյալ:

Հայտնի է, որ, անվանապես Ք. Հարիսի կողմից առաջնորդվող դեմոկրատները կարծում են, որ Ռուսաստանի դեմ պայքարի գաղափարը պետք է լինի ԱՄՆ-ի՝

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 05.11.2024 թ.:

համաշխարհային առաջնորդությունը պահպանելու ռազմավարության առաջնագծում: Այս առնչությամբ Հարավային Կովկասը դիտարկում են որպես այս առճակատման ևս մեկ հավանական ասպարեզ, որտեղից պետք է դուրս մղել Մոսկվային՝ անկայունության օջախներն ուղղակիորեն դեպի ՌԴ հարավային սահմանների պարագծով հետագա տեղափոխման նպատակով: Այսպիսով, խոսքը, այսպես կոչված, «երկրորդ ճակատի» մասին է, որը ուկրաինական պատերազմի հետ մեկտեղ կոչված կլինի իր տրամաբանական ավարտին հասցնելու ՌԴ ռազմական և տնտեսական ներուժը սպառելու Արևմուտքի ռազմավարությունը. Ռուսաստանի Դաշնությունում իշխանական համակարգի քայքայում և *«Պուտինի ռեժիմի»* փոփոխություն ներսից:

Հարավկովկասյան և ռուս մի շարք վերլուծաբանների կարծիքով՝ դեմոկրատների համար Ռուսաստանի Դաշնությանը Հարավային Կովկասից հեռացնելու մեկ այլ, ոչ պակաս կարևոր, դրդապատճառ է Կենտրոնական Ասիայի (Միջին Ասիա) նկատմամբ ԱՄՆ-ի աճող հետաքրքրությունը: Ուղղակի մուտքն այս տարածաշրջան և դրա նկատմամբ գերակայությունը Միացյալ Նահանգների գլխավորությամբ հավաքական Արևմուտքին խոստանում են մի շարք հավելյալ առավելություններ: Դրանցից են Կենտրոնական Ասիայի երկրների հարուստ էներգետիկ և այլ հանածո ռեսուրսների շահագործումը, ՌԴ ռազմավարական խորությունը կազմող հսկայական անդրուրալյան և սիբիրյան տարածքներին մոտենալն և չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» գլոբալ նախագծի հիմնական ուղիների վերահսկողությունը: Եվ, վերջապես, մուտքը նշված տարածաշրջան Վաշինգտոնին և նրա դաշնակիցներին թույլ կտա հաստատվելու Ռուսաստան–Հնդկաստան–Չինաստան «եռանկյունու» աշխարհագրական կենտրոնում, որը ձևավորվող «Գլոբալ Հարավի» կամ, այլ կերպ ասած, ԲՐԻԿՍ-ի երկրների համայնքի ողնաշարն է, որը մարտահրավեր է նետում միաբևեռ աշխարհի հայեցակարգին: Սա, ընդհանուր առմամբ, դեմոկրատների գլոբալ գործողությունների ծրագիրն է, ովքեր կարծում են, որ աշխարհում ԱՄՆ-ի գերիշխանությունը պահպանելու համար նախ պետք է կենտրոնանալ «Ռուսական հարցի» լուծման վրա, որը ճանապարհ կբացի դեպի այլ խնդիրների համեմատաբար հեշտ լուծում:

Մինչդեռ, ըստ վերլուծաբանների, Դ. Թրամփն ու նրան սատարող Հանրապետական կուսակցության զգալի մասը, չվիճարկելով աշխարհում ԱՄՆ-ի գերակայության սպառնալիքի չեզոքացման անհրաժեշտության գաղափարը, առաջարկում են ռազմավարական առաջնահերթությունների այլ հաջորդականություն և գործողություններ: Այստեղ պետք է պարզաբանել, որ *«Մոնրոյի դոկտրինան»,* որով առաջնորդվել է Դ. Թրամփն իր առաջին նախագահական ժամկետի նախընտրական արշավի ժամանակ, նրա կողմից այլևս չի համարվում ամերիկյան արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունք: Նա գիտակցում է, որ արդի աշխարհակարգի անխուսափելի ապակենտրոնացման պայմաններում «*Ամերիկան ամերիկացիների համար*» հայեցակարգն ի վիճակի չէ Միացյալ Նահանգներին պահել այնպիսի

դիրքերում, որոնք նրան ավելի քան մեկ դար ապահովել են համաշխարհային ռազմաքաղաքական և տնտեսական առաջնորդություն: Այսուհետ կամ Վաշինգտոնը կմիջամտի աշխարհի բևեռացման գործընթացին, կամ առաջացող նոր բևեռները ԱՄՆ-ին հետևողականորեն դուրս կմղեն աշխարհի ազդեցության բոլոր ոլորտներից: Այնուամենայնիվ, ի տարբերություն դեմոկրատների, Դ. Թրամփի թիմն առաջարկում է գործողությունների այլ հարացույց (պարադիգմ)՝ համարելով, որ առաջին բանը, որի վրա Վաշինգտոնը և նրա դաշնակիցները պետք է կենտրոնանան, դա Չինաստանի աճող ռազմաքաղաքական և տնտեսական հզորության խաթարումն է: Այս ծրագիրը ենթադրում է ոչ թե առճակատում Մոսկվայի հետ, որտեղից էլ, ըստ էության, սկսել են Միացյալ Նահանգները և Եվրամիությունը, այլ տրամագծորեն հակառակ ընթացք՝ ՌԴ հետ հարաբերությունների կայունացում՝ Մոսկվայի և Պեկինի միջև խորացող ռազմավարական գործընկերության ապամոնտաժման ակնկալիքով: Այս հաջորդականությամբ հենց ՉԺՀ-ն պետք է առաջինը իր վրա զգա Արևմուտքի տնտեսական և ռազմաքաղաքական ճնշումը: Մինչդեռ Ռուսաստանը գործողությունների այս հարացույցում ենթարկվելու է «փափուկ էքսպանսիայի», որի նպատակը, ինչպես և անցյալ դարի 90-ականներին, Ռուսաստանի Դաշնության քաղաքակրթական և տնտեսական ինտեգրումն է Արևմտյան աշխարհին:

Դ. Թրամփի և ամերիկյան իստեբլիշմենտի նրա կողմնակիցների նոր հայեցակարգի համաձայն, Չինաստանի «*խաղաղեցման ռազմավարությունը*» ներառում է գործողությունների երեք հիմնական ուղղություն: Առաջին. Խաղաղ օվկիանոսում ամերիկյան ռազմական ծավալապաշտության (էքսպանսիայի) խստացում և «Թայվանի ճգնաժամի» հետագա սրում: Երկրորդ՝ համաշխարհային տնտեսության ճարտարապետության վերանայում՝ Արևելյան Ասիայի կարևորագույն տեխնոլոգիական կենտրոնների և արդյունաբերական հզորությունների տեղափոխմամբ Արևմտյան կիսագունդ: Երրորդ. ՉԺՀ-ին զրկել ռեսուրսների բազայից և չինական անդրմայրցամաքային առևտրային նախագծերի երթուղիների վերահսկողությունից: Եվ հենց վերջին բաղադրիչի հետ է կապված Հարավային Կովկասի աճող դերը Թրամփի հետևորդների ծրագրերում: Խոսքը Իրանի մասին է, որի իշխող վարչակարգի տապալումը հանրապետականները համարում են Չինաստանի աճող տնտեսական հզորությունը զսպելու և Եվրասիական մայրցամաքում դրա գերակայության հեռանկարները կասեցնելու բանալին: Ներկա պահին Իրանը Արևելյան Ասիայի (ներառյալ Չինաստանի) էներգառեսուրսների հիմնական մատակարարն է, իսկ իր աշխարհառազմավարական դիրքի պատճառով հանդիսանում է նաև «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» և «Հյուսիս-Հարավ» համաշխարհային առևտրային և լոգիստիկ նախագծերի հիմնական շահառուներից մեկը: Այսպիսով, Իրանը առանցքային երկիր է Դ. Թրամփի՝ Չինաստանին զսպելու, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Պարսից ծոցի տարածաշրջանում «նոր կարգ» հաստատելու դոկտրինում, որտեղ Միացյալ

Նահանգները զգալիորեն կորցրեց իր նախկին դիրքերը Երկրորդ իրաքյան պատերազմից և, այսպես կոչված, *«Արաբական գարունից»* հետո:

Հանրապետականների ներկայիս առաջնորդը երբեք չի թաքցրել Իրանի հետ առճակատման իր մտադրությունները, և իր առաջին նախագահական ժամկետի ընթացքում հիմնականում իր իսկ քաղաքականության շնորհիվ սառեցվեց *«միջուկային գործարքը»,* որը ապագայում պետք է օգներ թուլացնելու Թեհրանի և հավաքական Արևմուտքի միջև շուրջ կես դար տևած լարվածությունը: Թրամփը եղել և մնում է «Իրանական խնդրի» ռազմական լուծման ջատագովը, որը, նրա կարծիքով, Իրանի՝ միջուկային տերություն դառնալը կանխելու միակ միջոցն է, որը թույլ կտա վերացնել ԱՄՆ-ի դաշնակից Իսրայելի համար *«մուլտիկրատական ռեժիմի»* կողմից բխող սպառնալիքներն ու յուրացնելու այս երկրի հարուստ ռեսուրսները հօգուտ գլոբալ Արևմուտքի: Նրա ծրագրերում առաջնահերթ տարբերակներից է համարվում իրանական պետականության ներկայիս տեսքով ապամոնտաժումը: Դա ուղղակիորեն արձագանքում է Իսրայելի ղեկավարության աջ արմատականների խնդրանքներին, ինչը զգալիորեն մեծացնում է ամերիկա-իսրայելական մեծ հակահիրանական արշավի հնարավորությունները, եթե հանրապետականները հաղթեն ԱՄՆ ընտրություններում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թեհրանի դեմ արդյունավետ պատերազմն ի սկզբանե անհնար է առանց Հարավային Կովկասի ռազմավարական պլացդարմի օգտագործման, փորձագետները կանխատեսում են, որ եթե հակառակ թերահավատների կարծիքին հանրապետականները հաղթեն, ապա ԱՄՆ-ը կշարունակի Հարավային Կովկասում ուժերի հավասարակշռությունն ու դիրքավորումները ակտիվորեն փոխելու իր քաղաքականությունը: Կարելի է ակնկալել, որ Վաշինգտոնի նոր վարչակազմը պատրաստ կլինի Մոսկվային առաջարկել գործարք, ըստ որի՝ Ռուսաստանի Դաշնությունն Արևմուտքից կստանա Ուկրաինայի հարցում իր պահանջած զիջումները և, առնվազն, քաղաքական և տնտեսական պատժամիջոցների զգալի մեղմացում: Փոխարենը նա ստիպված կլինի հեռու մնալ «Հարավային Կովկասի պլացդարմը» պատերազմի նախապատրաստելու Դ. Թրամփի և Բ. Նեթանյահուի մշակած ծրագրերից և, արդյունքում, հաշտվել Իրանի համար նախապատրաստված ճակատագրի հետ: Թերևս դա հենց այն էր, ինչ նկատի ուներ Դոնալդ Թրամփը, ով 2022 թվականից ի վեր բազմիցս հայտարարել է, որ ինչ-որ բան ունի առաջարկելու Կրեմլին, որպեսզի Ուկրաինայում պատերազմն ավարտվի ընդամենը մեկ օրվա ընթացքում:

Այսպիսով, դեմոկրատների և հանրապետականների կողմից ԱՄՆ-ի գլոբալ գերիշխանությունը վերականգնելու ճանապարհին տրամագծորեն հակառակ գործողությունների պլանների և «առաջնահերթ մրցակիցների» միջև տարբերակող ընտրության պայմաններում երկու ճամբարները հավասարապես դիտարկում են Հարավային Կովկասը որպես աշխարհաքաղաքական հարթակ, որը պետք է ենթարկեցվի Արևմուտքին: Այսպիսով, Հարավային Կովկասը և դրա հետ մեկտեղ

Կենտրոնական Ասիան, անկախ ԱՄՆ-ի ընտրությունների արդյունքից, կդառնան Վաշինգտոնի ռազմավարության՝ աշխարհում ապաբևեռացման գործընթացը ճնշելու կարևորագույն բաղադրիչը: Եվ այս համատեքստում էական չէ, թե ում դեմ առաջինը կուղղվի Արևմուտքի հարվածը՝ ՌԴ-ի, թե ՉԺՀ-ի ու ԻԻՀ-ի դեմ:

Փորձագիտական վերլուծությունը բերում է վերջնական եզրահանգման, որ վերը նշվածը հաշվի առնելով՝ Ադրբեջանի և Թուրքիայի դերը ԱՄՆ-ի համար միայն բարձրանալու է՝ անկախ նրանից, թե ով կդառնա Սպիտակ տան տերը: Անկարա–Բաքու օրգանական երկյակը ներդաշնակորեն տեղավորվում է ինչպես ՌԴ-ը ՀԿ-ից դուրս մղելու նախագծի, այնպես էլ Կենտրոնական Ասիա Արևմտյան ազդեցության ներմուծումը կեղծքաղաքակրթական (քվազիքաղաքակրթական) «Թուրան նախագծի» իրականացման միջոցով և Իրանին հարվածելու ծրագրում, որը Վաշինգտոնում համարվում է Պեկինի պոտենցիալ ֆորպոստը Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում: Հետևաբար, երկու դեպքում էլ թուրք-ադրբեջանական դաշինքը կարող է հույս դնել ԱՄՆ-ի և դրանց գլխավորած կոալիցիայի նախապատվությունների վրա՝ հույս ունենալով վճարվել այն ռիսկերի համար, որոնք կրելու է ամերիկյան ծրագրերի իրականացման ժամանակ: Իր աշխարհագրական դիրքի, աշխարհաքաղաքական նշանակության և Ալիևի ինքնավար ու կոռումպացված ռեժիմի հետ «փոխլրացման» պատճառով հավակնոտ Ադրբեջանը կատարելապես համապատասխանում է իրեն նախատեսվող «խոյի» գործառույթին՝ Չինաստանի և ՌԴ-ի՝ մերձավորարևելյան և Կասպից-սևծովյան ռազմավարությունը խորտակելու համար: Թուրքիան, իր հերթին, որպես «երկրորդ էշելոն» այս ծրագիրը կարող է հասցնել իր տրամաբանական ավարտին, «Գլոբալ Հարավի» ձևավորման տարածքը պառակտելով «Թուրան նախագծով» և զրոյացնելով Նոր աշխարհակարգի ասիակենտրոն մոդելի ներուժը:

Այս իրավիճակը նշանակում է, որ Բաքուն ԱՄՆ-ի գլխավոր գործընկերն է Հարավային Կովկասում, հատկապես Վրաստանի վերջին իրադարձություններից հետո, որի իշխանությունները Արևմուտքի հետ հարաբերություններում անցել են «անդառնալիության կետը»: Մի շարք հայ փորձագետներ միանգամայն ողջամտորեն կարծում են, որ Արևմուտքի կողմից Վրաստանի փաստացի կորուստը նպաստում է հիպոթետիկ «*Զանգեզուրի միջանցքի*» աշխարհառազմավարական նշանակության աճին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Իսրայելի ծրագրերում՝ որպես Ադրբեջանը Թուրքիայի հետ կապող միակ ցամաքային ճանապարհ, ինչը կոչված է երաշխավորելու ինչպես հանրապետականների, այնպես էլ դեմոկրատների ռազմավարության իրականացումը: Այս պայմաններում Սյունիքի նկատմամբ Հայաստանի ինքնիշխանությունը մեծ վտանգի տակ է, քանի որ խոսքը թուրք-ադրբեջանական երկյակի զավթողական նկրտումների և Արևմուտքի շահերի համընկման մասին է: Լայն իմաստով, օրակարգում բուն Հայաստանի՝ որպես պետականության լուծարման սպառնալիքի առջև հայտնված միջազգային սուբյեկտի գոյության հարցն է: Եզրակացությունը զուտ հիպոթետիկ է,

սակայն, հաշվի առնելով, որ խաղի խաղադրույքների մակարդակն այլևս վեր է առանձին վերցված տարածաշրջանի մասշտաբներից, և խոսքը գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացների մասին է, Հայաստանի Հանրապետությունը պետք է պատրաստվի հոռետեսական սցենարների:

Այս կապակցությամբ Դ. Թրամփի 03.11.2024 թ.-ի ուղերձը Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսին, որում ԱՄՆ-ի նախագահի թեկնածուն Արցախն անվանել է իր իսկական անունով և պատրաստակամություն հայտնել ապագայում աջակցելու հայությանը, դժվար թե մեծ հավատով ու լավատեսությամբ ընկալվի: Ք. Հարիսի հետ հաղթելու գրեթե հավասար հնարավորությունների պայմաններում Թրամփի թիմը անհրաժեշտ է համարել ընտրությունների նախաշեմին դիմել հայ հոգևոր առաջնորդին, քանի որ ANCA-ի դիրքորոշման շնորհիվ նույնիսկ մի քանի տասնյակ հազարի հասնող հայերի ձայները կարող են ճակատագրական լինել հանրապետականների համար:

Շատ հատկանշական է, որ Թրամփը դիմել է ոչ թե ANCA-ին, Արցախի անվանական իշխանություններին, և նույնիսկ ոչ էլ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, այլ Կիլիկիո տան հոգևոր հովվին՝ մի մարդու, որը թեև շատ հեղինակավոր է, սակայն քաղաքական կարգավիճակ չունի: Իսկ դա կարող է նշանակել, որ Դ. Թրամփը խուսափում է քաղաքական պատասխանատվությունից՝ խնդրելով իրեն աջակցել ամերիկյան ընտրություններում: Հետևաբար, Արցախյան և, ընդհանուր առմամբ, Հայկական հարցի լուծման նրա իրական ծրագրերը, համենայն դեպս, էապես տարբերվում են նրանից, ինչ նա ներկայացրել է Արամ Առաջինին հղված իր ուղերձում: Եվ այս խոսքերը ոչ այլ ինչ են, քան PR հնարք դեմոկրատների դեմ նախագահության համար կատաղի պայքարում: Փաստորեն, «Հայկական հարցը» հետաքրքրում է Միացյալ Նահանգների երկու քաղաքական ճամբարներին այնքանով, որքանով այն մաս է կազմում աշխարհում առաջնահերթության նրանց գլոբալ ռազմավարությանը: Խնդիրը միայն այն է, թե արդյո՞ք հայկական ինքնիշխանությունը նպաստում է այս ծրագրերին, թե՞ դրանք նպատակ ունեն հարավկովկասյան փոքր երկիրը հեռացնելու պատմական մրցուղուց: